ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՄԱԱՊՁԲ-21-8-9»

ք. Երևան 29.11.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՏԱ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Մովսեսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2,683,000 (երկու միլիոն վեց հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակների: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **10 էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Գործերի կառավարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱՏԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մալխասյանց 25
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471200503870000
ՀՎՀՀ 02203752
Տնօրեն՝

Ա.ՄՈՎՍԵՍՅԱՆ

Հավելված N 1
«ՄԱԱՊՁԲ-21-8-9» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

հ/հ	*ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ*	*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*
1	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ԶՈՒ զինանշանով նոթատետր/	Նոթատետրի ունի կոշտ կազմ և պատված է մուգ կանաչ երանգ ունեցող արհեստական կաշվով: Կազմի դիմերեսին գտնվող ուղղանկյուն խոռոչի կենտրոնում տեղադրված է արույրե ոսկեգույն ՀՀ ԶՈՒ զինանշանը, որի վրա պատկերված ՀՀ դրոշը պատված է գունավոր էմալով: Զինանշանի շուրջ պատկերված են հայկական թագավորական տների զինանշանները: Ուղղանկյուն խոռոչի ներսի հատվածը եզերված է 9-ից 11 սմ լայնություն և 11.5-ից 13 սմ երկարություն ունեցող արույրե ոսկեգույն նախշազարդ շրջանակով: Կազմի և խոռոչի եզրերը եզրակարված են ոսկեգույնով: Նոթատետրը տեղադրված է համապատասխան չափսեր ունեցող տուփում, որի մեջ՝ համապատասխան խոռոչում, գտնվում է գրիչը:
2	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ԶՈՒ զինանշանով հուշատախտակ/	Հուշատախտակը պատրաստված է 14-ից 15 սմ լայնություն, 19-ից 21 սմ երկարություն և 1-ից 1.7 սմ հաստություն ունեցող, եզրերը դեպի ներս ուռուցիկ փորված հաճարենու փայտից, ունի դարչնագույն երանգ: Հուշատախտակի վրա ամրացված է է 13-ից 14.5 սմ լայնություն, 17-ից 18 սմ երկարություն և 0.4-ից 0.8 սմ հաստություն ունեցող օբսիդիան: Օբսիդիանի վերևամասում կենտրոնադիր ամրացված է 4-ից 5 սմ լայնություն և 5-ից 5.8 սմ երկարություն ունեցող արույրե ոսկեգույն ՀՀ ԶՈՒ զինանշանը, որի վրա պատկերված ՀՀ դրոշը պատված է գունավոր էմալով: Զինանշանից ներքև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ոսկեգույն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Գրվածքներից ներքև ոսկեգույն պատկերված է ՀՀ ՊՆ վարչական համալիրը: Օբսիդիանը եզերված է 0.1-ից 0.4 սմ հաստություն ունեցող ոսկեգույն եզրագծով: Հուշատախտակը տեղադրված է համապատասխան չափսեր ունեցող տուփում, որում առկա է հուշատախտակը տուփից հեշտությամբ դուրս հանելու համար նախատեսված ժապավեն:
3	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ՊՆ վարչական համալիր հուշանվեր/	Խորհրդանշական նվերը էմալապատ գիպսից պատրաստված ՀՀ ՊՆ վարչական համալիրի մանրակերտն է, որը տեղադրված է 1,3-ից 2 սմ հաստություն ունեցող մուգ կանաչ երանգ ունեցող մարմարե հիմքի վրա: Մանրակերտի ետնամասով ձգվում է 0,8-ից 1,4 սմ հաստություն ունեցող մուգ կանաչ երանգ ունեցող մարմարե շերտը, որի մի կողմում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ», իսկ մյուս կողմում՝ «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, կենտրոնում գտնվում է արույրե ոսկեգույն ՀՀ ԶՈՒ զինանշանը, որի վրա պատկերված ՀՀ դրոշը իրականացված է գունավոր էմալով: Հուշանվերը տեղադրված է համապատասխան չափսեր ունեցող տուփում:
4	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր շրջանակով/	Եզրերը հղկված թափանցիկ ապակու ետևում գտնվող ալիքաձև նախշեր ունեցող ուղղանկյան վերևամասում երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ապակին տեղադրված է պոլիվինիլքլորիդից (ՊՎՔ) պատրաստված, դարչնագույն երանգ ունեցող լաքապատ շրջանակում: Ապակու ներքևամասում գտնվում է արույրաձույլ ոսկեգույն ՀՀ ՊՆ վարչական համալիրը, որի վերևանասում գտնվում են նախշազարդ եզրեր ունեցող երկու սկավառակները: Սկավառակներից առաջինի վրա պատկերված է ՀՀ զինված ուժերի խորհրդանիշ արծիվը, որի թևերի բացվածքում գտնվում է գունավոր էմալով պատված ՀՀ դրոշը, արծվի վերևամասում կորաձև գրված է «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևամասում՝ «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: Երկրորդ սկավառակի վրա կարմիր էմալով պատկերված է Աշոտ Երկաթ թագավորի Սուրբ խաչը: Հուշանվերի դարձերեսին գտնվում է հենակ՝ հուշանվերը հենված դիրքով տեղադրելու համար: Հուշանվերը տեղադրված է համապատասխան չափսեր ունեցող կանաչ թավշով պատված տուփում, որում առկա է հուշանվերը տուփից հեշտությամբ դուրս հանելու համար նախատեսված ժապավեն:
5	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր քարե/	Բաղկացած է միմյանց ամրացված, իրար հաջորդող սպիտակ և մուգ կանաչ երանգ ունեցող մամարներից: Կոնտրոնում գտնվում է 2,5–ից 3,5 սմ լայնություն ունեցող, վերևի հատվածը երկկողմ սրածայր սպիտակ մարմարը, որի աջ և ձախ կողմերում գտնվում են 1,2–ից 1,8 սմ լայնություն ունեցող, վերևամասում միակողմ սրածայր մուգ կանաչ երանգ ունեցող մարմարե եզրաշերտերը: Հուշանվերի աջ և ձախ կողմերը ավարտվում են 1,2–ից 1,8 սմ լայնություն ունեցող վերևի և ներքևի հատվածներում միակողմ սրածայր սպիտակ մարմարե եզրաշերտերով: Հուշանվերի կենտրոնում 6–ից 7 սմ տրամագիծ ունեցող կանաչ մարմարի վրա ամրացված է արույրե սկավառակ, որի վրա պատկերված ՀՀ զինված ուժերի խորհրդանիշ արծիվի թևերի բացվածքում գտնվում է գունավոր էմալով պատված ՀՀ դրոշը: Արծվի վերևամասում կորաձև գրված է «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևամասում՝ «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: Արույրե սկավառակը եզերող կապույտ օղակի վրա, ոսկեգույնով, կորաձև, երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Վերոնշյալ նկարագրությունը ամրացված է 0,2–ից 0,4 սմ հաստություն ունեցող ոսկեգույն արույրին, որը իր հերթին գտնվում է 1,5–ից 2,5 սմ բարձրություն ունեցող, հատած բուրգի տեսք ունեցող սպիտակ մարմարին: Հուշանվերը գտնվում է 0,7–ից 1,5 սմ բարձրություն ունեցող մուգ կանաչ երանգ ունեցող մարմարե հիմքի վրա: Հուշանվերը տեղադրված է համապատասխան չափսեր ունեցող տուփում:
6	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր սյուներով/	Կենտրոնում ամրացված 14,5–ից 15,5 սմ լայնություն և 23–ից 24 սմ երկարություն ունեցող թափանցիկ ապակու ետևում գտնվող արծաթագույն մետաղե թիթեղի ներքևամասում պատկերված է ՀՀ ՊՆ վարչական համալիրը, որի վերևամասի մի կողմում գտնվում է ՀՀ ԶՈՒ զինանշանը՝ գունավոր էմալով պատված ՀՀ դրոշով, մյուս կողմում՝ երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» գրառումները: Ցուցանակը ապակու հետ պահում են երկու օբսիդիանե սյուները, որոնց ներքևի և վերևի հատվածներում գտնվում են դեպի ներս կորաձև ակոսված, գլանաձև ալյումինե

		դետալները: Սյուները ամրացված են 0,7-ից 1,3 սմ հաստություն ունեցող օբսիդիանե հիմքին, որի տակամասի եզրերում գտնվում են օբսիդիանե ոտնակները: Խորհրդանշական նվերը տեղադրված է համապատասխան չափսեր ունեցող կանաչ թավշով պատված տուփում:
7	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր քարե և ապակյա/	Խորհրդանշական նվերը բաղկացած է 9,5-ից 11 սմ կողմեր և 0,5-ից 0,8 սմ հաստություն ունեցող երկու դարչանգույն օբսիդիաններից, որոնց միջև գտնվում է 0,3-ից 0,6 սմ հաստություն ունեցող ապակե շերտը: Խորհրդանշական նվերի դիմերեսին գտնվող օբսիդիանի կենտրոնում արված է կլոր անցք, որում երևում է հայելապատ մակերսի վրա փակցված արույրե սկավառակը: Սկավառակի կենտրոնում ոսկեգույնով պատկերված է ՀՀ զինված ուժերի խորհրդանիշ արծիվը, որի թևերի բացվածքում գտնվում է գունավոր էմալով պատված ՀՀ դրոշը: Արծիվը եզերված է դափնու և կաղնու ճյուղերով: Սկավառակը եզերված է կապույտ էմալով պատված օղակով, որի վրա ոսկեգույնով, կորաձև, երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Խորհրդանշական նվերը ամրացված է 1,5-ից 2,5 սմ հաստություն ունեցող օբսիդիանե հիմքին և տեղադրված՝ համապատասխան չափսեր ունեցող տուփում:
8	Խորհրդանշական նվերներ /Հուշանվեր «Գրիչների հավաքածու»/	Գրիչների հավաքածուն տեղադրված է դարչնագույն երանգ ունեցող փայտե տուփում, որն ունի 10-ից 12 սմ լայնություն, 15,3-ից 17,3 սմ երկարություն և 2-ից 3,6 սմ բարձրություն: Տուփի դիմերեսին փորագրված է ՀՀ զինված ուժերի զինանշանը, որից ներքև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Տուփի կափարիչը բացվելով ծառայում է հենարան՝ ցուցադրելով գրիչների հավաքածուն, որոնք տեղադրված են համապատասխան փորվածքներում: Հավաքածուն բաղկացած է թեք անկյամբ տեղադրված երկու գրիչից, որոնցից մեկը գրում է կապույտ գույնով, մյուսը՝ սև: Գրիչների միջնամասում՝ տուփի վրա արված համապատասխան փորվածքում, տեղադրված է ոսկեգույն ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշնի վրա պատկերված ՀՀ եռագույն դրոշը իրականացված է գունավոր էմալով:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

h/h	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀդրամ)	մատակարարումը 2021թ., ընդ որում՝ մինչև 10.12.2021թ.
1	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ԶՈՒ զինանշանով նոթատետր/	հատ	10	61,000	610,000	10
2	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ԶՈՒ զինանշանով հուշատախտակ/	հատ	10	35,000	350,000	10
3	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ՊՆ վարչական համալիր հուշանվեր/	հատ	5	40,000	200,000	5
4	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր շրջանակով/	հատ	10	45,000	450,000	10
5	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր քարե/	հատ	5	40,000	200,000	5
6	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր սյուներով/	հատ	5	40,000	200,000	5
7	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր քարե և ապակյա/	հատ	7	35,000	245,000	7
8	Խորհրդանշական նվերներ /Հուշանվեր «Գրիչների հավաքածու»/	հատ	20	21,400	428,000	20

Ծանոթություն.

- Ապրանքատեսակները պետք է լինեն նոր և չօգտագործված:
- Մատակարարման վայրը ք. Երևան, Բագրևանդի 5:
- Նշված ապրանքները չեն հանդիսանում հիմնական միջոցներ:
- Նշված ապրանքների համար համապատասխանության սերտիֆիկատ կամ երաշխիքային նամակ չի պահանջվում:
- Մատակարարումը հնարավոր է իրականացնել փուլային եղանակով:

Հավելված N 2
«ՄԱԱՊՁԲ-21-8-9» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի			
h/h	անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ., ընդ որում՝ IV եռամսյակ
1	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ԶՈՒ զինանշանով նոթատետր/	39281200/59	610,000
2	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ԶՈՒ զինանշանով հուշատախտակ/	39281200/60	350,000
3	Խորհրդանշական նվերներ /ՀՀ ՊՆ վարչական	39281200/61	200,000

	համալիր հուշանվեր/		
4	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր շրջանակով/	39281200/62	450,000
5	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր քարե/	39281200/63	200,000
6	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր սյուներով/	39281200/64	200,000
7	Խորհրդանշական նվերներ /Խորհրդանշական նվեր քարե և ապակյա/	39281200/65	245,000
8	Խորհրդանշական նվերներ /Հուշանվեր «Գրիչների հավաքածու»/	39281200/66	428,000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱՏԱ» ՍՊԸ Տնօրեն՝

Ա.ՄՈՎՍԵՍՅԱՆ

Հավելված N 3
«ՄԱԱՊՁԲ-21-8-9»
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____ __	_____
_____ __	_____
գտնվելու վայրը _____ __	գտնվելու վայրը _____
հհ _____ __	հհ_____
հվհհ _____ __	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«ՄԱԱՊՁԲ-21-8-9»
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն